

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՀԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՊԱՏՄԱՈՂԲԵՐՈՒՄ

Ողբը գրական ժանր է, որ ծագել է հնագույն ժամանակներում ժողովրդական բանահիստության մէջ եւ քարձր ծաղկման հասել հայ հին ու միջնադարեան գրականութեան մէջ: Հայ իրականութեան մէջ ողբի ձեւաւորման բանահիւսական հիմքը եղել է ժողովրդական լալեաց երգ-բանաստեղծութիւնը, որ յօրինուել-կատարուել է յուղարկաւորութիւնների ժամանակ: Ողբերգը, որ կազմել է նշանաւոր անձանց թաղման ծէսի գլխաւոր բաղադրիչը, կատարել են մասնագիտացած ողբասաց կամ «ձայնարկու» կանայք մեծ հանդիսաւորութեամբ՝ «լալով», երգելով ու նուագելով, պարելով ու կախաւելով:

Յանձին ողբասաց կանանց՝ ողբը ձեռք է բերել իր կոչուած կատարողներին, որոնք թաղման ժամանակ լաց ու կոծի, յուզական խօսքի եւ տխուր մեղեդու համադրման արհեստն իրենց հմտութեամբ ու կատարման վարպետութեամբ վերածել են իսկական արուեստի: Սգոյ երգերի կատարման վերաբերեալ ուշագրաւ տեղեկութիւններ են յայտնում մեր մատենագիրներն ու միջնադարեան բանաստեղծները: Ժամանակի ընթացքում ողբի թեմատիկ շրջանակը ընդլայնուել է, եւ դամբանական ողբի հիմքի վրայ երեւան են եկել պատմական, անձնական-հնարական, յիշտակարանային եւ այլ տեսակի ողբեր:

Որպէս ընդհանուր օրինաչափութիւն՝ բոլոր կարգի ողբերին բնորոշ եւ սրտանմլիկ պատումը, յուզական յագեցուածութիւնը, չափազանցուած համեմատութիւնը, հոգետորական երանգաւորումները, նիւթի հնարական

մեկնաբանութիւնը եւ այլն: Իրար հակադրելով «երանելի» անցեալն ու ողբերգական ներկան՝ ողբի հեղինակն ընթերցողներին (ունկնդիրներին) մխիթարում է ապագայի լաւատեսութեամբ, եւ նրա ամբողջ խօսքը դառնում է «ի սփոփանս տրտմեցելոց»: Աւելացնենք նաեւ, որ, որպէս կանոն, ամէն մի բովանդակութիւն ստանում է իր լեզուայօրինումաժային ձեւաւորումը, ուստի ողբի յիշեալ տեսակները տարբերում են նաեւ իրենց լեզուաոճական իւրայատկութիւններով:

Պատմական ողբը հայ հին եւ միջնադարեան գրականութեան ինքնատիպ ժանրերից մէկն է, որի գոյութիւնը պայմանաւորուած է մեր պատմութեան եղբրական ընթացքով, Հայոց աշխարհին պատուհասած մեծագոյն ողբերգութիւններով՝ օտար նուաճողների ասպատակութիւններով, դաժան հարստահարումներով ու գերեզմաններով, յուսահատութեան մատնուած մարդկանց զանգուածային գաղթերով: Պատմաողբերն ունեն ընդգծուած ազգային-հայրենասիրական բովանդակութիւն եւ քաղաքական նպատակաւորողութիւն: Հայ գրականութեան մէջ պատմաողբի ժանրը արմատաւորուել է Մ. Խորենացու «Ողբով», իսկ դրա ամենակատարեալ օրինակը մնում է Ն. Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմը: Ողբեր են գրել Դաւթակ Քերթոզը, Խաչատուր Կեչառեցին, Գրիգոր Տղան, Ստեփանոս Օրբելեանը, Առաքել Բաղիշեցին, Սիմէոն Ապարանցին, Յովհաննէս Մակունցին եւ ուրիշներ:

Իրականութեան եւ երազանքի քախումից ծնուած պատմաողբերը յատկորոշուում են գաղափարական քովանդակութեան խորութեամբ եւ լեզուառեւակա՜ն տարաբնոյթ իւրայատկութիւններով, սակայն այստեղ մեր նպատակից դուրս են դրանց թե՛ քովանդակութեան լուսարանումը(1) եւ թե՛ լեզուառեւակա՜ն առանձնայատկութիւնների ընդհանրական ֆննութիւնը: Մեր նպատակը շատ աւելի համեստ է՝ ֆննութեան առեւել պատմաողբերի լեզուառեւակա՜ն իւրայատկութիւններից մէկը՝ կրկնութեան գործառուումն իրրեւ դրանց լեզուալօրինուածքային իւրայատկութիւն:

Պատմաողբերում առանձնանում են երեք կարգի կրկնութիւններ՝ 1) հնչիւնակրկնութիւնները որպէս հնչիւնական քանադարձումներ, 2) կրկնաւոր քարդութիւնները որպէս քառական ինֆնատիպ միաւորներ. եւ 3) շարահիւսական կրկնութիւնները որպէս՝ ա) նախադասութեան անդամի (անդամների) քերականական կրկնութիւն եւ բ) լեզուաարտայայտչամիջոց: Որպէս ընդհանուր օրինանշափութիւն՝ կրկնաւոր քարդութիւններում մասամբ, իսկ շարահիւսական կրկնութիւններում աւելի մեծ չափով առկայ են յոյզը, ապրումը, խօսողի (հեղինակի) յուզագգացական վերաքերմունքը: Եւ դա քնական է. կրկնութեան նպատակը հենց հաղորդումը հեղինակի վերաքերմունքային գունաւորմամբ առաւել պատկերաւոր ու արտայայտիչ, յուզական ու ներգործուն դարձնելն է: Լեզուի կառուցուածքի առաջին աստիճանում՝ հնչոյթային մակարդակում, իրացուող կրկնութիւններից պատմական ողբերում գործառուում են հիմնականում քաղաձայնոյթն ու յանգը: Բաղաձայնոյթը չափածոյ խօսքում,

սակաւադէպ էլ արձակում նոյն կամ յարաքերակից քաղաձայնների նպատակային կրկնութիւնն է: Բաղաձայնների նման կրկնութիւնները պատմաողբերում շատ տարածուած չեն, քայց առկայ են: Այսպէս՝ հետեւեալ քառատողը յատկորոշուում է հ քաղաձայնի կրկնութեամբ.

Մըշտամըռունչ աղօթէին
եւ հանապազ հեծեծէին,

Պատրիարքունք եւ ֆահանայֆ
Պատարագաւըն հայցէին (281)(2):

Յանգը հնչիւնների՝ կաղապարային արժէք ձեռք բերած կշռոյթահամակարգային կրկնութիւնն է: Յանգաւորումը չափածոյ խօսքն օժտում է յուզարտայայտչական տարբեր նրքերանգերով: Ողբերը հիմնականում յանգաւոր քանաստեղծութիւններ են, աչֆի են ընկնում տողավերջոյթների ընդհանրութեամբ: Յանգն իրրեւ յուզական խօսքի կառուցուածքային առանձնայատկութիւնն ի սկզբանէ երեւան է եկել քանաւոր ողբերի մէջ: Հետեւելով ողբասացների՝ Նարեկացին իր պոեմի առանձին հատուածներ գրել է յանգաւոր, միաժամանակ յիշատակելով, թէ իր ժամանակ եւ իրենից առաջ ողբ յօրինողները բոլոր տները վերջացնում էին նոյն տառով՝ ցաւի, տխրութեան արտայայտման համար. Ումնք ողբալի ու կողկողաձայն Բանաստեղծութիւն եղանակելիս Տունն աւարտում էին միեւնոյն տողով, Զանալով այդպէս առաւել սաստիկ, ծաւաւանջօրէն նմել, մորմոքել Սրտերը՝ արցունք կորզելու համար... Այս եղանակը յարմար է թախծի պատկերման համար. Թշուառութիւններն այդպէս կցորդուած,

Շաղկապուած միմեանց նոյն
յանգաւորմամբ, միեւնոյն գրով,
Ներկայանում են կրկնակի ողորմ ու
սրտանմլիկ: (3)

Անտարակոյս, պատմական
ողբերը մեծ մասամբ յանգաւոր են,
աչֆի են ընկնում արտաքին ճշգրիտ,
մօտաւոր եւ ոչ ճշգրիտ յանգերի
հարուստ կիրառութիւններով: Այսպէս՝
Աւրհնեալ է Աստուած Հայր եւ Սուրբ
Հոգին,
Փա՛ռք ներողութեան Աստուծոյ
Որդւոյն Միածնին:

Ահա զողբն ասեմք տէր Ստեփանոսին.
եղբա՛րք, լըսեցէ՛ք հաւասար զմահ
տարածմին... (209):

Բառային մակարդակում
կրկնութեան իրացումը կրկնաւոր
բարդութիւններն են, որոնք, ըստ իրենց
բաղադրիչների կապակցման ձեւի,
բաժանւում են երեք խմբի՝
համադրական, վերլուծական եւ
երկդրութեամբ կրկնաւորների:
Զխորանալով բարդ բառերի այս
խմբերի իմաստակառուցութեային
խրայատկութիւնների բնութեան մէջ,
որն այստեղ մեր նպատակից դուրս է,
(4), միայն նշենք, որ պատմաողբերում
գործածուած են թէ՛ համադրական եւ
թէ՛ վերլուծական կրկնաւոր
բարդութիւններ գրեթէ նոյն
յանախականութեամբ. երկու ձեւերն էլ
ֆիչ են կիրառուած: Համադրական
կրկնաւոր բարդութիւնները բնութա-
գրում են բառական կաղապարում
միեւնոյն հիմնական ձեւոյթի կամ
արմատի կրկնութեամբ, երբ կրկնեալ
եւ կրկնորդ բաղադրիչները հանդէս են
գալիս միաձոյլ, ունեն մէկ բառային
շերտ եւ արտասանւում են միասնաբար:
Պատմաողբերում նման կրկնաւորները
արտայայտուած են՝ ա) բաղադրիչների

պարզ կցումով եւ հնչիւնափոխութեամբ՝
խաբերայ (225) (=խաբես+խաբես),
տարտամ (238) (ր>մ) հեծեծէին (281)
(հ>Օ), ք) քաղածայնների անհնչիւնափոխ
կցումով՝ չարչարեաց (226), գ)
յօղակապով՝ մեծամեծ (275), զանազան
(292) եւ այլն:

Վերլուծական կրկնաւոր
բարդութիւնների բաղադրիչներն ունեն
մէկ բառի իմաստ, բայց պահպանում
են իրենց շեշտը, հանդէս են գալիս
անջատաբար եւ արտասանւում են
միջբառային արտասանական դադարով:
Ողբերում նման բարդութիւնները շատ
չեն՝ ծով-ծով (211), մի-մի (261),
ազգի-ազգի (262) եւ այլն:

Պատմական ողբերում աւելի
լայն կիրառութիւն ունեն
շարահիւսական կրկնութիւնները, որոնք
երեւան են գալիս միեւնոյն կառոյցում
կամ խօսքի օղակում շարահիւսական
միաւորների մէկից աւելի անգամ
արտայայտուելու ձեւով եւ աւելի
յանախ ծառայում են մարդկային
որոշակի հոգեվիճակի ու
վերաբերմունքի դրսեւորման: Երբեմն
ծաւալուն յուզական խօսքը սկսւում է
շարահիւսական-ոճական կրկնութեամբ,
որը սկզբից եւեթ կանխորոշում է
պատումի ընթացքը՝ ընթերցողի համար
անխուսափելի դարձնելով հեղինակի
յուզագգացական վերաբերմունքը ծնող
դէպքերի զարգացումը: Այսպէս՝
Խորենացու «Ողբը» սկսւում է
ստորոգեալի ու խնդրի լրացման կրկնու-
թեամբ, որ տուեալ համատեքստում
ունի հոետորական հնչեղութիւն:

Ողբամ զքեզ կապակցութեան
արուեստաւոր կրկնութեամբ ուղեկցուող
պարբերութիւն - նախադասութեամբ
հեղինակը ընթերցողին միանգամից
փոխադրում է իր մտահոգութիւնների
աշխարհը՝ նրան հոգեբանօրէն

նախապատրաստելով արտաֆին ու ներֆին աննպաստ պայմանների հետեւանումով Հայոց աշխարհին պատուհասած տխուր իրավիճակին հաղորդակից դառնալուն. «Ողբամ զքեզ, Հայոց Աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր եւ փահանայ, խորհրդական եւ ուսուցող, վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն»: (5) Այս յուզական նախարանը յարմար ձեւ է միանգամից բուն նիւթին անցում կատարելու համար: Արդարեւ, հետագայ շարադրանքը պետականակորոյս երկրի ու ժողովրդի մասնատուածութեան, ժողովրդի տարբեր շերտերի բարոյալիման տխուր վիճակի նկարագրութիւնն է եւ այդ ամենի հետեւանումով հայրենասէր հեղինակի սրտի միացող ցաւի դրսեւորումը:

Շարահիւսական կրկնութիւնները միատարր չեն եւ բաժանուում են մի քանի խմբի՝ քերականական, քերականական-ոճական, ոճական, իմաստային եւ այլն, որոնք տարբեր յանախականութեամբ արտայայտուել են պատմական ողբերում: Քերականական կրկնութիւնները շարահիւսական տարբեր միաւորների կրկնութիւններն են՝ նշանակեալ հասկացութիւններն առաւել ճշգրիտ եւ ընդգծուած արտայայտելու համար: Նման կրկնութիւնները հիմնականում կազմում են համասեռ շարքեր, երբ կրկնեալը եւ կրկնորդը (կրկնորդները) ունեն բառաքերականական նոյն արտայայտութիւնն ու շարահիւսական կիրառութիւնը:

Հետեւաբար կրկնութեան համասեռ շարքի անդամները համընկնում են՝ ա) բառիմաստով,

բ) ձեւաբանական արժէքով եւ գ) շարահիւսական կիրառութեամբ: Այսպիսիք են գլխաւոր ու երկրորդական անդամների, նախադասութեան յարակից միաւորների, բարդ նախադասութեան բաղադրիչների, ինքնուրոյն նախադասութիւնների, պարբերութիւնների կրկնութիւնները: Պատմաողբերում շարահիւսական համասեռ կրկնութիւնը, ի հարկէ, չունի արտայայտութեան այս լայն ընդգրկումը: Այստեղ հանդիպում են հիմնականում երկրորդական անդամների կրկնութիւնները: Որոշի կրկնութիւնը արտայայտուում է միեւնոյն կառոյցում տարբեր որոշեալների հետ նրա գործածելու ձեւով. ինչպէս՝ Շատ բերդ եւ փղափ առին, շատ երկիր հրով այրեցին... (229): Բայական անդամի լրացումների կրկնութիւնն էլ արտայայտուում է միեւնոյն խնդիրը կամ պարագան բարդ նախադասութեան բայ-ստորոգեալներին լրացնելով. ինչպէս՝ Մեռան թագաւորքն մեր եւ իշխանք երկրիս ամենայն Թողին անհովիւ ըզմեզ, տիրեցին մեզ գայլք եւ գազան (231): Այստեղ առկայ է ուղիղ խնդրի կրկնութիւնը:

Ողբերում նոյն ձեւով են կրկնում նաեւ նախադասութեան յարակից միաւորները: Այսպէս՝ հետեւեալ օրինակներում ի նախդիրը կրկնում է տարբեր կապի խնդիրներից, իսկ ո՛չ... ո՛չ (ո՛չ... եւ ո՛չ) կրկնադիր շաղկապի բաղադրիչները՝ համասեռ ենթականերից առաջ, ի բեմբդ 'ւ ի խորանդ ելան ամենայն պիղծըն անարժան... (233): Ոչ ոք էր թաղող նոցա, ո՛չ ողորդ եւ ո՛չ լալական (ն.տ.): Աւելացնենք, որ ի նախդիրը ձայնաւորից առաջ, որպէս կանոն, կրկնում է յ-ի փոխակերպուած՝ նախածանցի գործառոյթով(6). ինչպէս՝ Նաեւ թրոշումք երկնայինք, ծովային գեռումք ամենայն,

Գազանդ ու յանապատէ յանասնոց ջոկունք ամենայն (ՀՀՄԲՔ, 501):

Շարահիւսական կրկնութիւնը լինում է նաեւ անհամասեռ, երբ կրկնութեան շարքի անդամները՝ կրկնեալը եւ կրկնորդը (կրկնորդները), ունեն քերականական տարբեր արտայայտութիւն, որի հետեւանալով դրանք բառիմաստով համընկնում են, շարահիւսական կիրառութեամբ՝ տարբերում, օրինակ՝ Կամիմ ես բան մի խօսել, խօսելոյ ոչ եմ արժանի... (228):

Կրկնութեան անհամասեռ շարք է կազմում նաեւ լրացում-լրացեալի կապակցութիւնը. ինչպէս՝ Մեծամեծ մինչեւ փոքունս նըշմարտէ յոյժ խոտորեցան, Խոտորնակի խոտորնակ քարկացաւ մեզ անմահ արքայն (232):

Անհամասեռ կրկնութեան շարք կազմող կրկնեալի եւ կրկնորդի շարահիւսական կապը, յարաբերութիւնը երբեմն ճշգրտում է դրանք միջարկող նախդիրի միջոցով. ինչպէս՝ Հայհոյութեամբ բացեալ բերան Քրիստոնէի առ քրիստոնեայն, Սըրով միմեանց յերկիր ելան եւ գերեզար սըրբոց յարեան (292):

Ոճական կրկնութիւնը շարահիւսական միաւորների այն կրկնութիւնն է, որն արտայայտում է խօսողի (գրողի) յոյզերն ու ապրումները, ակտիւ վերաբերմունքը՝ խօսքը դարձնելով ներգործուն, արտայայտիչ, պատկերաւոր ու անմոռաց: Այս դէպքում կրկնուող լեզուամիաւորները դառնում են ասոյթի իմաստի եւ յուզարտայայտչական լարուածութեան կրողները, նպաստում խօսքի հնչիւնական ներդաշնակութեանը, կշռոյթի ու չափի ուժեղացմանը, երբեմն էլ հաղորդման մէջ ներամուծում երաժշտութեան տարրեր:

Շարահիւսական կրկնութեան հիմքի վրայ ձեւաւորում են մի շարք լեզուարտայայտչամիջոցներ, որոնք գեղարուեստական խօսքի անդամահատման եւ շարահիւսական նիւթի որոշակի սկզբունքներով համաչափ բաշխման միջոց են ծառայում: Կրկնաբերական արտայայտչամիջոցներ են յարակրկնութիւնը, վերջոյթը, հանգոյցը, կցուրդը, օղակը, բազմաշղկապութիւնը, քառախաղը, գուգապատկութիւնը, նոյնահիմքութիւնը, պարոյթը, մասնատումը, աստիճանաւորումը եւ այլն: Սրանցից պատմաողբերում աւելի շատ են կիրառուած յարակրկնութիւնը, կցուրդը, նոյնահիմքութիւնը, աստիճանաւորումը եւ այլն: Յարակրկնութիւնը կամ նոյնասկիզբը կրկնաբերութեան արուեստի ամենապարզ եւ հնագոյն դրսեւորումն է, որ յատկորոշում է չափածոյում բանաստեղծութեան հարեւան տողերի, իսկ արձակում՝ կից նախադասութիւնների սկզբում միեւնոյն քառի կամ շարահիւսական աւելի ծաւալուն միաւորի կրկնութեամբ: Պատմաողբերում հանդէս գալով տարբեր փոփոխակներով՝ յարակրկնութիւնը ուժեղացնում է խօսքի զգացական ազդեցութիւնը: Յարակրկնուող միաւորները տարբերակւում են իրենց շարահիւսական գործառոյթով: Ողբերում ենթակայ յարակրկնութիւնը երեւան է հանում ոճական տարբեր իւրայատկութիւններ՝ պայմանաւորուած կրկնուող ենթակայի բառական արտայայտութեամբ, տուեալ նախադասութեան կառուցուածքային առանձնաչափութիւններով եւ այլ հանգամանքներով: Բոլոր դէպքերում ենթակայ յարակրկնութեամբ կառուցուած խօսքում տրամաբանական շեշտն ու կշռոյթը կրող միաւորը կրկնուող ենթական է. ինչպէս՝

Ոմանք օտար երկիր գնացել
փրկեցան,

Ոմանք բազում արծաթ կաշառ
խոստացան,

Եւ եւ, որ վասն որդոց
գՔրիստոս ուրացան,

Որքոց եւ աղատաց բազումք
մատնեցան (217):

Պատմաողբերում շատ է
հանդիպում նաեւ ստորոգեալ յարա-
կրկնութիւնը: Այս դէպքում ընդգծում
է ստորոգեալի բառական
նշանակութիւնը, բանաստեղծութիւնը
դառնում է ռիթմիկ ու երաժշտական,
ուժեղացնում են քնարական խօսքի
յուզականութիւնն ու հոգեւորական
հնչեղութիւնը: Այսպէս, օրինակ, Սիմէոն
Ապարանցին, ընթերցողի ուշադրութիւնը
նկարագրուելիք դէպքերի վրայ
կենտրոնացնելու նպատակով, իր մի
ողբն սկսում է ստորոգեալի
յարակրկնութեամբ.

Ողբացէ՛ք անլոյծ սըգով,
եկեղեցի՛ք Հայաստանեայց,

Ողբացէ՛ք ամխիթար, հանուրց
հիւսսի քնակի՛ք ազանց:

Ողբացէ՛ք անլուռ լալով,
յարեթածին կրդի՛ք ազգաց,

Ողբացէ՛ք ամենեքեան, ծա՛յն
ամբարձէ՛ք աշխարհաց (240):

Ողբերում լայն կիրառութիւն
ունի նաեւ որոշիչ յարակրկնութիւնը:
Ողբերգունները դիմում են յարակրկնու-
թեան այս ձեւին, երբ ցանկանում են
ընդգծել տարբեր առարկաներ քնութա-
գրող նոյն որակական կամ վերաբերա-
կան յատկանիշը. ինչպէս՝

Շատ հարկ յորդուց բաժնեցան,
ի Պարսից ազգէն գերեցան,

Շատ հարսն եւ աղջկունք
տարան ի Սպահան եւ ի Խորասան:

Շատ գեղեցկագուն մանկունք
յոտնատակ բաւալմամբ մեռան,

Շատոնք ի Արաստղն անկան,
ջըրախեղդ առ Աստուած փոխան (278):

Որոշիչ յարակրկնութիւնը
արտայայտում է նաեւ այլ ձեւով,
երկտողանի տների առաջին տողերի
սկզբնաբառերը կազմում են որոշիչ
յարակրկնութիւն, իսկ 2րդ տողերը՝ մէկ
այլ յարակրկնութիւն. ինչպէս՝

Ջայն ծով-ծով աչերն տէր
Ստեփանոսին

Որպէս թէ կանթեղ էր, վառած
ի մէջ տաճարին:

Ջայն կամար ուներն տէր
Ստեփանոսին

Որպէս թէ կամար էր քաշած
աւագ խորանին:

Ջայն մոյտան ճակատն տէր
Ստեփանոսին

Որպէս թէ գումբէք էր սալած
մեծ կաթողիկոսին (211):

Պատմաողբերում յարակրկնու-
թիւն են կազմում նաեւ նախադասու-
թեան յարակից միաւորները՝
շաղկապները, ձայնարկութիւնները,
վերաբերականները, որոնց նոյնասկիզ-
բային կրկնութիւնը եւս ծառայում է
խօսքի գեղագիտական պահանջներին,
մասնաւորապէս նրա կշռոյթային
ներդաշնակութեան ապահովմանը:
Այստեղ շաղկապներից յարակրկնութիւն
են կազմում առաւելապէս ո՛չ... ո՛չ եւ
թէ՛... թէ՛ կրկնադիր շաղկապները, երբ
նրանց բաղադրիչները նոյն շեշտադ-
րումով հանդէս են գալիս հարեւան
բանատողերի սկզբում. ինչպէս՝

Ո՛չ ըզպատկեր հին հարուա-
ծոյն, զգերիլն որդոց նահապետաց,

Ո՛չ զկամաւ մուտըն յեգիպտոս,
զթըշուառանալն յարկս օտարաց:

Ո՛չ ըզվարելըն խրստութեամբ
առ Քաղդեայսն յերկիր չարեաց,

Ո՛չ ըզտապաստ ցուրտ դիա-
կանցն զանթըւելին համարողաց (241):

Զնայած վերաբերմունք արտայայտող բառերն այնքան էլ հակուած չեն հանդէս գալու յարակրկնութեամբ, մանաւանդ որ դա նաեւ պահանջում է ասելիքն այդ ուղղութեամբ ծաւալելու իւրայատուկ տաղանդ ու վարպետութիւն, այդուհանդերձ որոշ պատմաողբեր կառուցուած են վերաբերական կամ ձայնարկութիւն յարակրկնութեան հետեւողական կիրառման սկզբունքով: Այսպէս՝ Սիմէոն Ապարանցու ողբի վերջամասում երկտողեայ հինգ տների առաջին տողերը սկսւում են ա՛յ ձայնարկութեամբ:

Ա՛յ բարձրաբերձ կատարի
լերանց, որ յոյժ տեղեակ է՛ ամենուն,

Զեր յարակայ անշարժ
դիտմամբ մեզ ծանուցէ՛ք
գերանութիւն:

Ա՛յ մըշտահոս աղբերակունք,
եթէ ունի՛ք գկըտակ մահուն,

Մնացեալ որրոցըս տո՛ւք
ըզգիրն, որ դադարի յոգոց հանումն
(248):

Միջնադարեան պատմաողբերում կիրառուած կրկնաբերական արտայայտչամիջոցներից մէկն էլ կցուրդն է: Սա չափածոյ խօսքում բանաստեղծական տողի վերջին բառի կրկնութիւնն է յաջորդ տողասկզբում՝ տուեալ հասկացութիւնն ընթերցողի ուշադրութեան կենտրոնում պահելու եւ համանուագայնութիւն ստեղծելու նպատակով: Ողբերի մէջ աւելի յաճախ կիրառւում է միջտնային կցուրդը, երբ նախադաս բանատան վերջին բառը, որ տուեալ հաղորդման հիմնական իմաստն է կրում, կրկնւում է որպէս յաջորդ բանատան առաջին բառ: Այսպէս՝

Թեւըն հըմայիլ կապեաց,
խաներուն խալաթ ուղարկեաց,

Վաթսուն հազար ձիաւոր առ

իւրեան զօրքն ժողովեաց:

Ժողովեաց սուլքան ու խան,
որք եկին առ իւրեանց արքայն,

Երեք օր երեք գիշեր
տըրտմութեամբ նըստան ի դիւան
(276):

Այստեղ ժողովեաց բառի կցուրդային կրկնութիւնը նաեւ կապակցական գործառոյթ է իրականացնում՝ ուժեղացնելով խօսքի երկու հատուածների մտքի ու փրականական կապը:

Պատմաողբերում ուշադրութեան արժանի կրկնաբերական բանադարձումներից մէկն էլ իմաստային կրկնութիւնն է՝ աստիճանաւորումը: Սա շարահիւսական միեւնոյն կառոյցում նոյն իմաստի դրսեւորումն է լեզուական յարմաստ ձեւերով՝ ասելիքն աւելի պատկերաւոր ու վերաբերմունքի ընդգծումով արտայայտելու համար: Այսպէս՝ Ստեփանոս Թոխատցու մի ողբում կարդում ենք.

Որպէս եւ ես լոկ Ստեփանոսս

Սահեալ անկայ մէջ Կաֆայի՝

Տընանկ, պանդուխտ, նըդեհ, դարիպ
Կամ իրրեւ զնաւ ի մէջ ծովի
(261):

Ընդգծուածները կազմում են աստիճանաւորում:

Պատմաողբի լեզուաոճական իւրայատկութիւններից մէկն էլ նարտասանահարցական կրկնութեամբ խօսքի կառուցումն է: Ընթերցողի վրայ հոգեբանական մեծ ազդեցութիւն գործելու նպատակով Խորենացին իր «Ողբի» որոշ պարբերութիւններ կառուցել է հենց այս սկզբունքով: Այսպէս՝ Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն, ո՞վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն, ո՞վ ուրախասցի ընդ

առաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ զհայրական բարբառեսցի զուարեութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդոյս: Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն, որք ամենայն քանիւք քակտեալք եւ քայքայեալք՝ յոլովս փոփոխեն վարդապետս եւ քազում գիրս, որպէս ասաց ոմն ի հարցն. առ ամենայն քան նմանապէս դժուարին, եւ չար օրինակ գրեն զայն անձանց՝ զծիծաղելն զմեւք եւ զարհամարհելն իրրեւ զանհաստատնովք, եւ որ ոչ ինչ պիտանիցու ունիցի արուեստ: Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով, եւ զմեզ սփոփեսցէ գովելով, եւ չափ դնէ քանի եւ լուրքեան (Խոր. Գ, գլ. ԿԸ):

Հայ հին եւ միջնադարեան պատմական ողբերում կրկնութիւնն իրրեւ խօսքի կառուցման լեզուառնական իւրայատկութիւնն նշուած առանձնայատկութիւններով չի սահմանափակուում: Մենք անդրադարձանք դրա առաւել կարեւոր դրսեւորումներին:

Ամփոփենք: Սկսած Գողթան երգերից ու Աստուածաշնչի հայերէն

բարգմանութիւնից եւ մեր դասական մատենագրութիւնից՝ կրկնութիւնն իր տարաբնոյթ դրսեւորումներով, իրրեւ քառակերտման եւ խօսքակերտման եղանակ, մշտապէս ուղեկցել է մեր գրաւոր խօսքին, մասնաւորապէս վերջինիս գեղարուեստական ու հրապարակախօսական դրսեւորումներին: Այն իր ինքնատիպ արտայայտութիւնն է գտել նաեւ մեր հին ու միջնադարեան պատմաոլորտում՝ ծառայելով մարդկային յորդահոս յոյգերի ու ապրումների, հայրենակարօտ զգացմունքների արտայայտմանը:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԵՀ.- «Բանբեր Երեւանի համալսարանի» (ամսագիր):

ԳՆՄՈ.- Գրիգոր Նարեկացի, Մատենա ողբերգութեան, Երեւան, 1979:

ՄՄ.- «Մանկավարժական միտք» (ամսագիր):

Խոր.- Մովսէս Խորենացի, Ողբ, Թիֆլիս, 1913:

ՆՍԱ.տ.- Նոյն տեղը:

ՊԲՀ.- «Պատմա-քանասիրական հանդէս» (ամսագիր):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Միջնադարյան պարամաղորի ժանրի զարգացման ուղու և բովանդակության բնությունը տես Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պարամական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Ե., 1969, էջ 5-202:

² Մեջբերված օրինակների մեծ մասը (բառեր, նախադասություններ, չափածո հարվածներ) քաղված են Պ. Խաչատրյանի հիշյալ աշխատության հավելվածում ներկայացված բնագրերից, և փակագծերում, առանց համառոտագրությունների, նշված էջերը վերաբերում են այդ գրքին:

³ Գրիգոր Նարեկացի, Մարյան ողբերգության, թարգմանությունը Վ. Գևորգյանի, 1979, էջ 150-151:

⁴ Կրկնավոր բարդության այս փառարեսակների մասին մեր մոլորցումները տես Ա. Կարապետյան, Արդի հայերենի համադրական կրկնավոր բարդությունների գնահատման հարցի շուրջը, ԲԵՀ, Ե., 2005, թիվ 1, էջ 67-76, նույնի՝ Արդի հայերենի կրկնավոր բարդությունները ժամանակակից հայերենում, ՊԲՀ, Ե., 2005 թիվ 2, էջ 264-276, նույնի՝ Արդի հայերենի երկրորդային կրկնավոր բարդությունները և դրանց ուսուցումը, ՄՄ, Ե., 2005, թիվ 2-3, էջ 91-97:

⁵ Մովսէս Խորենացի, Պարմութիւն Հայոց, Երևան, 1991:

⁶ Հմմտ. Գ. Զահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 134: